

տիր խօսքէն, Պետութիւնը կան, ուր ոչ միայն տարբեր կրօնքներն, այլ և ուրիշ լեզուաց գործածութիւնն արգիւրէալ է: Այլ տեսնուին Պետութիւնը, որք կը ջանան իրենց այլ և այլ ազգէ ժողովրդաց լեզուն ջնջել: Վասնորքի էֆէնտին ուղեց իւր երախտագիտութիւնը յայտնել այս աղտոտութեան համար: Ուստի ես ալ կը կարծեմ որ կը վայել յիշել ուղեբերին մէջ:

Բաւի՛ պէ՛, երեսփոխան Ադրիա-նուպօլոսյ. — Ըստ Սահմանադրու-թեան հարկ է թուրքերէն լեզուն գիտնալ, հետեւաբար խնդիր ընելու հարկ չեմ տեսներ:

Նախագահ. — Բարեմ պէ՛ շատ լաւ պատասխանեց: Մնաց որ լեզուաց պաշտպանութիւնը մինչև այսօր զը-լացուած չէ: Լեզուաց խնդիրն հա-սարակաց կրթութեան վերաբերեալ օրինաց դարձն է. հետեւաբար այդ տեսակ խնդիրներն այն օրինաց հա-մեմատ պիտի կարգադրին:

Այս միջոցէսկն մէջ յազուած լեզուի խնդիրն՝ ըստ մեզ բոլորովին տարագէտ է: Տէրութիւնը թուրքերէնէ զտա պաշտօնական լեզու չը ճանչեր. իսկ այլ և այլ ազգաց իրենց լեզուն խօսելու գրելու մշակելու և պահպանելու ալ բնաւ արգելք չըլլար: Հետեւաբար, եթէ շնորհակալեաց ու-ղեբերին մէջ լեզուաց պահպանու-թեան կէտն ալ յիշելու առաջար-կութիւնը՝ ոչ-պաշտօնական լեզունե-րը կերպիւ մը նուիրագործել տալու նպատակաւ չէ, ըստ մեզ՝ ուրիշ պատ-ճառ մը չկար յիշելու: Վասն զի տէ-րութիւնն անցեալ դարուց մէջ ոչ պաշտպանած է այլ և այլ հայտնակ ազգաց լեզուները, ոչ ալ արգելած: Արդարեւ տեղ տեղ, մանաւանդ փոքր Ասիոյ մէջ ժողովուրդք կան որ իրենց ազգային լեզուն մոռցած են, ասոր ալ պատճառն իրենց անհոգութիւնն եղած է. օրովհետեւ տուներու և ե-կեղեցեաց մէջ լեզուի արգելքը մը-տած չէ երբէք:

Կայսերական հրապարտութեամբ՝ վարենայի կառավարիչ Սայիտ փա-շան թուրքայի կառավարիչ անուա-նեցաւ:

Թուրքայի կառավարիչ Ալի օղլոյն ալ վարենայի կառավարիչ անուանե-ցաւ:

Կ. Պոլսոյ նախնական տոնէին տն-դամ Դաքիր էֆէնտին՝ վերաքննու-թեան տոնէի քաղաքային բաժնին անդամ անուանեցաւ:

Իւսկիւտարու պատժական տոն-նին տեղամ ինչիւր էֆէնտին Կ. Պոլ-սոյ նախնական տոնէի քաղաքային բաժնին անդամ անուանեցաւ:

Իւսկիւտարու պատժական տոն-նին առաջին Միւսէ իյո չաճի Ասիմ էֆէնտին նոյն տոնէին անդամ ան-ւանեցաւ:

Դարձեալ կայսերական հրապար-տութեամբ՝ Նիշի զօրաց հրամանատար Ալի Սայիտ փաշան Երասթայի զօրաց հը-րամանատար անուանեցաւ փոխանակ Տէրփիլ փաշային, որ Սկլանիկի կու-սակալ անուանեցաւ:

Տօքթօր Բաթթի (Խորայէլայի) ձերականտի ժողովին անդամ ան-ւանեցաւ:

Վեհ. Սուլթանն երէկ իւր սեփա-կան թէրթէ՛լ Բիւլոյն չափենաւով իդ-միտի ծովածոցը պտոյս մ'ըրաւ, և Հէրէքէի գործարանն ալ աչքէ ան-ցունելով՝ իրկիւտան մօտ Տօքթօ-Պաշ-ճէի պալատը վերադարձաւ:

Մայրաքաղաքի թուրք լրագիր-ները կը ծանուցանեն թէ անցեալ-ներն աքորեալ Րափիլ փաշան և Ուզուն-Էթիկ Րիշա պէյ ներսում ըս-տանալով Կ. Պոլսի պիտի վերադառնան:

Թաքլիսի վաքայի պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ հասա-րակաց կրթութեան պաշտօնատու-նէն հրատարակեալ Մաշնաթէին մէջ բազմաթիւ վիճակագրական սխալ-

ներ գտնուելով, պէտք չէ վատահի-ւանոր առաջ տեղի տալ թեանց:

Երթիթաքի Զօրաֆօն էֆէնտին, որ Սէրփիլէն էֆէնտինի տեղ երես-փոխան ընտրուած էր, մինչև ցարդ ժողովին նիստերուն ներկայ գտնո-ւած չէ: Յունաց թուրք լրագրին խօսքին հետեւեալով. քաղաքային տու-թիւնը դեռ երեսփոխանութեան վը-կայագիրը զրկած չէ թրթիթաքի է-ֆէնտինի, թէ և անոր հետ ընտրուող Հաճի Ահմէտ էֆէնտինին զրկել է:

Այս յուն, եթէ ստոյգ է, քա-ղաքագետութեան ընթացքը ծանր մեղադրանաց կ'ենթարկէ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 31 մարտ.
Դաշնագիրն այսօր ստորագրեցաւ: Բա-ցարդապէս կը հրաւիրէ զԹուրքիա որ բա-րենորդութեանը գործադրէ. բայց Թուր-քիոյ հաւանութիւնը չենդրոյնը դաշնագ-րին նկատմամբ:

Փարիզ 31 մարտ.
Արեւիկ կոմսը ծանր հիւանդ է Նիսի մէջ:

Լոնտոն 1 ապրիլ.
Օպերայի լրագիրը կըսէ որ եթէ Ռուսիա իւր զորքերը խաղաղական վիճա-կի մէջ չընէ, Անգլիա բնաւ ուրիշ խոս-տում մ'ըլած չէ, և անհնար պիտի ըլ-լայ Ռուսիոյ՝ Եւրոպական որդման մը կեր-պարանք տալ դաշնագրին, որ արտօնու-թիւնն տայ իրեն պատկարաց հրատարա-կելու Թուրքիոյ դէմ:

Բեռլին 2 ապրիլ.
Լոնտոնցի կեանք լրագիրը կը ծանու-ցանէ թէ դաշնագիրը մարտ 31ին ստու-րագրուեալ է Լոնտոնի մէջ, և կաւե-ցընեն թէ դաշնագրին անվիճարկ Գրան սխալ հաղորդութիւն ծանուցողով:

Պէրլին 2 ապրիլ.
Պ. Պիտարը մօտ ժամանակէն երկար հրաժեշտ մը պիտի առնու: Պ. Պիտար ա-նոր տեղ արտաքին գործոց, Պ. Բաթթի-հաղէն ալ ներքին գործոց նախարարու-թեան պաշտօնը պիտի վարեն:

Մարսիլա 2 ապրիլ.
Միտլանթ փաշան հոս հասաւ, Պար-սլոն և անտի Մարտիտ երկուքս համար, ուրիշ ալ Պորտո և Փարիզ պիտի երթայ:

ԿՈՍՏԱՆԳՆՈՎՈՂՈՒՄ			
ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
21 մարտ. երկուշաբթի իրիկուն	14.10		
22 մարտ. երեքշաբթի առաւօտ			
բացուեցաւ	14.8		
ժամ 6 1/2ին	14.3		
Բուռն իրիկանակցեաց ֆր.	36		
Թողնալով	158 1/2		

ԸՆԹԱՅԲ ԱՐԺԵՐՎԹՈՅ			
Կ. Պոլսի 21 մարտ			
Ստիթի Եթէն Երալի բաժ.	Անգլ. իր.	3.8	
Փոխանակութեան		2.43	
Կ. Պոլսոյ Պաշտօնային		3.12	
Քրէտի Եթէն Երալ		3.	
Քրէտի Օսթրո-Թուրք		—	
Փոխ.	1863	Ֆր.	74
	1865		74
	1869		67
	1872		23
	1873		63 50
Թրամուց	Օսթ. իր.	4 53	

ԸՆԹԱՅԲ ԳՐԱՄՈՅ			
24 մարտ			
Անգլ. իր.	Անգլ.	109 36	
Նարոյնի ոսկի		87 27	
Խմէնի ոսկի		89 40	
Գըրմից		51 20	
Հինգ ֆրանք		—	
Հինգ նոց		114 40	
Պրինս		170	

ԱՂԿԱՅԻՆ

... Խմբագիր Մաթիս ազգագրութ լը-րագրոյ.

Այլ խնդրեմ, աւեր, որ հետեւեալ նա-մակա պատուական լրագրոյ միջոցաւ հը-րատարակել բարեհաճէք:

Ամեն քը գիտէ որ 1877 տարւոյն ազ-գային երեսփոխանական ժողովոյ դու-մարման ամենաշատակար գործերէն մին պիտի լինի ազգային վարժարանաց ընդ-հանուր կարգադրութեան նոր ծրագիր մը, զոր վարչութիւնն ընդհանուր ժողու-վոյ մատուցած և ժողովը իւր օրակար-գին մէջ անցուցած է:

Վարչութիւնն այն ծրագիրը պատրաս-տելով և ժողովը վաղ ընդ վայել և մեծ ուշադրութեամբ անոր վրայ վիճարկելով և զայն ընդունելով՝ մեր սիրելի ազգին մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի լինին, քանզի չկայ մեզ համար դատարարու-

թեան խնդրէն աւելի կենսական և աւելի կարեւոր խնդիր մը: Մեր վարժարաննե-րն այսօրուան տարւոտ և անհաշու վի-ճակէն ազատելով նոցա յառաջդիմական ուղիւն վարելու մը տալ, և մօտալուտ ապա-գայի մը մէջ ազգին նեցուկ ըլլալու կա-րող Հայեր հասցնել՝ այնպիսի բարիք մ'է, որոյ յարգը կը ճանչէ ամեն լուսամիտ և հայրենասէր Հայ: Ազգը յաւէտ երախ-տապարտ պիտի մնայ ներկայ վարչութեան, եթէ այս խնդիրն իւր կարեւորութեան համեմատ հասուն վիճաքանութիւններէ զինի արդիւնաւոր և գործնական լուծում մը ունենայ: Սակայն ցաւալի է որ կարգ մը երեսփոխանք՝ ազգայնութիւնը դի-մակ ըրած և իրենց անձնական շահերէն զատ ուրիշ շարժառիթ չունենալով՝ օրը խնդիր մը կը հանեն և ազգային բարձր շահուց յատկացեալ ժամերը կը մսխեն առանց օգտի, մինչդեռ դատարարու-թեան խնդրոյն նման անվիճարկ որոշում մը պահանջող սովորական օրէնքներ պիտի կը յետաձգուին ի վնաս ազգին:

Սղատելով և մտղթելով որ անձնու-րաց ազգայնութեան ոգին այդ անձինքը ներշնչեալ ապագային մէջ ազգային շահուց աւելի նպատաւոր ընթացք մը բանելու, մեք կուզեմք վարչական մը մեր վարժա-րանաց ընդհանուր կարգադրութեան մէջ մտնելու անհրաժեշտ դատուած բա-րեւոթութեանց վրայ խօսիլ:

Նշիմ ազգերով որ (ինչպէս որ հաւանա-կան է) Կեղր վարչութեան Ռուսմական խորհուրդը այս նոր ծրագրոյն ալ խառա-սիրութեան մէջ 73ի դարձեալական կանո-նադրութիւնը իրեն առաջնորդ ընդունած ըլլայ, ջանանք եթէ կարելի է՝ գտնել թէ ինչ են այն պահանքներ, որոց ծրագիրը նպատակ ունի ազգու դարման մը մա-տուցանել: Ամեն անոնք որ 73ի վար-ժարանաց հրահանգները կարդացած են, նշմարած են անտարակոյս որ այն աշ-խատութեան մէջ՝ շատ մը խիստ օգտաւ կար տրամադրութեանց լրով կը գտնուին նաև շատ մը պակասներ:

Ստորագրեալ կարդացած և ըստ իմ կարեայ Ռուսմական խորհուրդոյ այն աշ-խատութեան վերայ բաւական խորհած ըլլալով հետեւեալ դիտողութիւններն ընե-լու՝ կը համարձակուիմ, որոց համար Մաթի-սի . . . Խմբագիրն և ընթերցողաց ներու-դամտութիւնը կը խնդրեմ:

Այս դիտողութիւններս երեք կարգի պիտի բաժնեմ. Ա. ուսմանց բաժնման մասին. Բ. խրաքանչիւր ուսում աւան-դելու մասին. Գ. վարչական դրութեան մասին:

Ա. Եթէ չեմք սխալիր, 73ի կանոնադրու-թիւնը ուսմանց բաժնման մասին շատ անդամ անորոշութեան և անհամեմատու-թեան մէջ գտնուած է. այսպէս կան շատ մը ուսումներ որ բնաւ մեր դպրոցաց մէջ մտած չեն, սակայն խնդիր եղեալ կա-նոնադրութեան մէջ յիշուած են իւր զարդ-թեան վերջապէս շատ մը ուսմանց բա-ժանումը բոլորովին անբնական կը թուի մեզ:

Ներեցէք, . . . Խմբագիր, քանի մը խօսքով խօսաբարեմ դադարեալ:

Պոլսոյ մէջ գտնուած Հայ վարժարա-նաց աստիճանը Գաղղիական Լիգիներէն և Գերմանական Ժիմնազիներէն աւելի վար է: Սակայն այս երկու ազգաց այս դըւ-րոցներէն և ոչ միայն մէջ Ամբողջական և Անհաշուական հաշիւ կը գտնուի. մինչ-դեռ մեր վարժարանաց մէջ՝ ըստ վեր-յիշեալ կանոնադրութեան այս երկու ու-սումն ալ պէտք էր աւանդիլ:

Անտարակոյս փախաբեկի էր որ մեր վարժարանաց խրաքանչիւր մէկ մէկ հա-մարարաններ ըլլային. և միշտ պէտք է ջանալ համալրարանի աստիճան ունեցող կեդրոնական վարժարան մը հիմնելու, ուրիշ կարենան լիւր արժանաւոր և ուս-եալ դատարարութեան. բայց Անհաշուական հաշիւը ուսուցանելէ յառաջ հարկ է որ մեր վարժարաններն յաճախող Հայ պա-տանքը նոյն թուարանութիւն ուսանին կանոնաւոր կերպիւ: Աստի կը յուսամք որ նոր ծրագիրն այս կէտը ի նկատի պի-տի առնու և անդործադրելի սրտմաղ-րութիւն մը իւր մէջէն պիտի ջնջէ:

Նշիմ անասուններէր ի կանոնադրութեան մէջ պատմութեան ուսման ալի և այլ առ-բիներու բաժանումը բոլորովին անբնա-կան կերպի:

Ազգային պատմութիւն նախակրթա-րանի մէջ կաւանդուի, և նոր ազգաց պատ-մութիւնը վերջին տարւոյն չընանին մէջ ներառեալ է:

Թող Ռուսմական խորհուրդը որոշէ՝ եթէ լուաղայն բաժնման մը չէ՝ ի գործ-ածել նաև մեր ազգային պատմութեան համար այն դրութիւնը զոր ընդհանուր պատմութեան համար կընդունինք, և Հայկականց ցեղին պատմութիւնը հին ազգաց պատմութեան հետ ուսուցանել, Արաբականց պատմութիւնը Հոմիւրացե-ւոց հետ, և Բաղրամունեաց ու Ռու-րիկեանց պատմութիւնը միջին դարու պատմութեան մէջ: Վերջապէս նոր ազ-գաց պատմութիւնը երկու տարիի բաժ-նել:

Բ. 73ի կանոնադրութիւնը իւրա-քանչիւր դաստառ իւր ճիւղին դաստիա-րակութեանը մէջ ազատ կը թողու: Ա-ռանց ուրանալու թէ մեր ազգին մէջ օր-քան զոր կարող և արժանաւոր դասա-տուաց թիւը կը բարձրանայ, պէտք է ի նկատի առնուլ որ Հայ դաստառաց մար-մինն ընդհանրապէս ամիրած է, և մեր թէ-հին և թէ նոր դաստառաց մեծադոյն մասը չունին այն փորձառութիւնը և այն հըմ-տութիւնը որ խրաքանչիւր ուսման ճիւղի յարմար մեթոդը կարենան տեսնել և գործադրել: Նոյն անգամ մեր դասա-տուները բնաւ մեթոտ չունին. կէտ մը, որ մասամբ իւր կը բացատրէ մեր վար-ժարանաց ըրած դանդաղ յառաջդիմու-թիւնները: Ասկէ բացայայտ կը տեսնուի թէ վնասակար է սանձարձակ թողուլ զդա-ստառն ու նոր ծրագրին մէջ ինչպէս որ ը-րած 73ի կանոնադրութիւնը: Ռուսմական կանոնադրը կընայ քանի մը ձեռնհաս անձերու մասնաւոր հմտութեանցը դի-մելով՝ խրաքանչիւրին ուսման յարմար եղած դրութիւնը նոր ծրագրոյն մէջ նը-շանակել՝ դաստառներն իրենց դասախո-սութեանց մէջ առաջնորդելու համար:

Գ. Մեր վարժարանաց վարչական դը-րութիւնը շատ մը բարենորոգմանց ին-թակայ կրնայ ըլլալ: Եւ եթէ նկատենք այն ամեն վնասները որ ներկայ դրու-թեան արդիւնքն են, պիտի տեսնենք այդ դրութիւնն անպապաղ բարեփոխելու հարկը:

Արդարեւ վարչական այդ անպատեհ-դրութիւնը չէ՞ որ դպրոցաց պաշտօնակա-լաց (մասնաւորապէս դաստառակ) յա-րատե փոփոխութեանը պատճառ ըլլալով՝ վարժարանաց կանոնաւոր ընթացքը կը խանդարէ և շատ անդամ տնորդ ամիս-ներ վարժարան մը առանց դաստառի կը թողու:

73ի կանոնադրութիւնն այսպէս կը կարգադրէ այս կարեւոր կէտը. Թաղական խորհուրդը հոգաբարձութիւն մը կընտրէ, հոգաբարձութիւնը տեսուչ մը կանուանէ, և այս վերջինս վարժարանը կը վարէ:

Թաղական խորհուրդը վարժարանին դրամական օժանդակութիւն մը ընելով, առաջին նկատմամբ, վարժարանին վը-րայ վերին հսկողութեան իրաւունքը ա-նոր պատկանեալ կը թուի: Թաղական խորհուրդը անդամը ընդհանրապէս պատ-ուաւոր և արժանաւոր թաղեցիներ ըլ-լալով հանդերձ՝ շատ անգամ դպրոց մը կառավարելու համար պէտք եղած ոչ հան-դամանքներն և ոչ ալ ժամանակ ունին:

Հոգաբարձութիւնն այս մասին աւելի կարող կը գտնուի. բայց սա իւր ստորա-կարգեալ վիճակուն իւր դիտաւորու-թիւններն ի գործ գնելու անկարող կը գտնուի. Թաղական խորհուրդը հետ մա-քսուել կըստի. վերջապէս կը յաղթուի, և իրեն կը յաջորդէ ուրիշ հոգաբարձու-թիւն մը, ուրիշ տեսուչ մը և ուրիշ դա-ստառներ:

Այս է ահա մեր վարժարանաց վար-չական դրութեան հաւատարմի պատկերը: Այսպիսի մը տակաւ կազմութեան մը միակ դարման կարենալ ըլլալ թերեւ վարժա-րանաց ընդհանուր վարչութիւնը ձեռնու-հաս և կարող Ռուսմական ժողովոյ մը ձեռնաց մէջ կեդրոնացուիլ. խրաքանչիւր վարժարանի երեսփոյն համար ցուցակ մը կը շինուի, Ռուսմական խորհուրդը ձե-ռընհաս և Թաղական խորհուրդը իրաւա-սութեան անխախտ տեսուչ մը կանուանէ, և այսպէս Պոլսոյ վարժարաններն իւր մի ահապին մեքենայի այլ և այլ մասեր մի և նոյն ազգութեան տակ յառաջ կը դի-մեն:

